# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք, ,
getapnya.gyuxapetaran@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

N 022/86
*03սեպտեմբերի2019թ.*

Կից ներկայացնում ենք Գետափնյա համայնքի ավագանու թիվ՝ 14-Ն, 15-Ն, 16-Ն, 17-Ն, 18-Ն որոշումները:

Առդիր՝ 6էջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ.ԱԶԱՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2019թվականի N 14-Ն

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել 30.08.2019թ-ի ավագանու թիվ 5-րդ նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեներում փոփոխություններ կատարելու մասին.
2. Համայնքի սեփականություն հանդիսացող և պետական հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով վարձակալության տալու մասին.
3. Քաղ. Արկադյա Մարտիրոսյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած հողատարածքի օտարման թույլտվություն տալու մասին.
4. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում կազմակերպելու մասին:

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանի՝ Ս.Ազատյան
Ա.Վարդանյան
Գ.Ղազարյան
Վ.Ավագյան
Ս.Հարությունյան
Հ.Թամիրյան
Ա.Պետրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2019թվականի N 15-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել 2019թ.ի համայնքի վարչական և ֆոնդային բյուջեներում կատարվող փոփոխությունները, ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքների կատարման ծախսերի և համակարգիչ ձեռք բերելու համար:

04.5.1

5112-Շենքեր շինությունների կառուցումից պակասեցնել-3000,0հազ. դրամ

04.2.4

5113-Շենքեր շինություններ կապիտալ վերանորոգմանն ավելացնել-3000,0հազ.դրամ

4251-Շենքեր և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանումից պակասեցնել-

400,0հազ. դրամ

01.1.1

4252-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգումներին ավելացնել- 400,0հազ. դրամ:

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանի՝ Ս.Ազատյան

Ա.Վարդանյան

Գ.Ղազարյան

Վ.Ավագյան

Ս.Հարությունյան

Հ.Թամիրյան

Ա.Պետրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱԶԱՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2019թվականի N 16-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության 2,03047 հա վարելահողը և համայնքային պետական գյուղ. նշանակության հողամասը 1,5հա վարելահողը մրցութային կարգով տալ վարձակալության:

1.Վարձակալության ժամկետը և վարձավճարի մեկնարկային գինը սահմանել՝

Լոտ 1- 2,03047հա վարելահող 25000հազար դրամ՝ սահմանել 25տարի

Լոտ 2- 1,5հա համայնքի պետական սեփականության վարելահող 20000դրամ՝ սահմանել 25 տարի.

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանի՝
Ս.Ազատյան
Ա.Վարդանյան
Գ.Ղազարյան
Վ.Ավագյան
Ս.Հարությունյան
Հ.Թամիրյան
Ա.Պետրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2019թվականի N 17-Ն

## ՔԱՂ.ԱՐԿԱԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Ա.Մարտիրոսյանի խնդրանքին.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Համայնքի 21-րդ փողոցի թիվ 123հասցեով Արկադյա Կոլյայի Մարտիրոսյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած 0,00234հա բնակավայրերի հին սեփականության վկայականի համարը՝ 1251629, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Աէրացիա թաղամասի 1-ին շենքի 3-րդ բնակարանի բնակիչ՝ Արկադյա Կոլյայի Մարտիրոսյանին:

Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 31(երեսունմեկ) հազար դրամ:

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանի՝ Ս.Ազատյան
Ա.Վարդանյան
Գ.Ղազարյան
Վ.Ավազյան
Ս.Հարությունյան
Հ.Թամիրյան
Ա.Պետրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱԶԱՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 օգոստոսի 2019թվականի N 18-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված աշխատանքները կազմակերպելու համար, բյուջեում հավելյալ եկամուտ ապահովելու ինչպես նաև համայնքում գյուղատնտեսական զարգացման նպատակով՝ հավանություն տալ աճուրդ վաճառքի կարգով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող նշված 0,10328հա բնակավայրերի բնակելի կառուցապատման և այլ հողատեսքի նշանակության հողամասերը:

Լոտ 1- Բնակավայրերի այլ հողատեսքի նշանակության հողամաս՝ 0,03876 հա (ծածկագիր 03-030-0027-0080)

Լոտ 2- Բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս 0,06452հա(ծածկագիր 0037-0052)

2.Աճուրդ վաճառքի կարգով օտարվող հողամասերի համար մեկնարկային գին սահմանել տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 100%- ի չափով:

Կողմ 7 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանի՝ Ս.Ազատյան

Ա.Վարդանյան

Գ.Ղազարյան

Վ.Ավագյան

Ա.Հարությունյան

Հ.Թամիրյան

Ս.Պետրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱԶԱՏՅԱՆ